ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով պատճենահանող սարքերի պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «*ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՊՍ-17/2* » ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 31.10.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Մկրտչյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը Մ. Անտոնյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ՊՍ-17/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Բևեռային ուղի» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ.բն6)**
2. **«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Լ. Լիսինյան 8)**
3. **«Այ Սերվիս» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան)**
4. **«Ստարտկոպի» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբանցք,3 շենք, բն 15)**
5. **«Անուշ Պետրոսյան» ԱՁ (ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի հայտի:

«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրում լրացված է պահանջագրի ներկայացման ամսաթիվը, ինչը պետք է լրացվեր շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելու օրը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Քանակ	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/				
				«Բևեռային ուղի» ՍՊԸ	«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ*	«Այ Սերվիս» ՍՊԸ*	«Ստարտկոպի» ՍՊԸ	«Անուշ Պետրոսյան» ԱՁ*
1	Պատճենահանող սարքերի պահպանման ծառայություններ	1	2200000	99950	37020	388800	124500	134500

*** Հանդիսանում են ԱԱՀ չվճարող**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«Բևեռային ուղի» ՍՊԸ** -ին,

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **«Ստարտկոպի» ՍՊԸ** -ին,

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 10:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան

_____ Վ.Գսպոյան

_____ Է.Արշակյան

_____ Մ. Անտոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան